ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

"05" 05 2017
1849

ГОСУДАРСТВЕННАЯ СЛУЖБА
БЕЗОПАСНОСТИ ПИЩЕВЫХ ПРОДУКТОВ
МИНИСТЕРСТВА СЕЛЬСКОГО
ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ
ԼՐԱԳՐՈՂ ՏԱԹԵՎ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(ք. Երևան, Բյուզանդի 1/3, 8-րդ հարկ)

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 4-ի
թիվ F8B1-505B-9AA8 գրության

Ձեր գրությամբ ներկայացված հարցերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1-2. Հայաստանի Հանրապետությունում (Երևան քաղաքում և մարզերում) գործող անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնող սուբյեկտների ցանկը զետեղված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում, որտեղ կարող եք ծանոթանալ այդ սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվությանը:

3-5. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից ստուգումներ են իրականացվել «Անասնապահական մթերքի փորձաքննության կենտրոն», «Կենդանական ծագման մթերքի փորձաքննության կենտրոն» և «Հակահամաճարակային արշավախումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերի համատեքստում հստակ սահմանված հարցերի շրջանակներում:

6-7. Վերը նշված սուբյեկտների կողմից փորձաքննություններն իրականացվել են առանց համապատասխան մանրադիտակների կամ անհայտ ծագման մանրադիտակներով, չեն ունեցել կոմպրեսորիում և հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումներ:

Պայմանական համարակալմամբ 8-րդ, 10-րդ և 11-րդ հարցերը պարունակում են հրապարակման ոչ ենթակա՝ հնարավոր նախնական քննության տվյալներ:

9. «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնելու պայմանագրեր չի կնքել:

12. Հանրային սննդի կազմակերպությունները միս ձեռք բերելիս իրացնողից պետք է պահանջեն համապատասխան եզրակացություն մսի լաբորատոր փորձաքննության վերաբերյալ և գնման ՀԴՄ կտրոնը կամ հաշիվ-ապրանքագիրը՝ անհրաժեշտության դեպքում գնված մսի ձեռքբերման աղբյուրը պարզելու համար:

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

Կատ.՝ Իրավաբանական վարչություն/Հ. Աջեմյան
(+374 10) 20 38 63 /136

Կոմիտասի պող. 49/2, 0051 Երևան, ՀՀ
Пр. Комитаса 49/2, Ереван 0051, РА

Тел./факс: (+374 10) 20 38 53
Эл. почта: hs@ssfs.am
Веб-сайт: www.ssfs.am